

Sirayin Namakner

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

Sempoul, S. (1897-1938). Sirayin Namakner. 1930.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF. Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :

*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.

*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer [ici](#) pour accéder aux tarifs et à la licence

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.

*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment passible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter reutilisation@bnf.fr.

ՀՐԱՏՍՐԱԿՈՒԹԻՒՆ ՀՈՐԻԶՈՆ ԳՐԱՏԱՆԻ ԹԻՒ 8

Ս. ՍՄԲՈՒԼ


ՄԻՐԱՅԻՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Գ Ի Ն Յ Ֆրանք

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ « ՀՈՐԻԶՈՆ »

Մ Ա Ր Ս Է Յ Լ

1930



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ, ՀՈՐԻԶՈՆ ԳՐԱՏԱՆ, ԹԻԻ 8

Ս. ՍՄԲՈՒԼ

ՍԻՐԱՅԻՆ ԵՆ ԱՄՄԱԿԱՆԻ

Կ Ա Մ

ՈՒՂԵՑՈՅՑ ՍԻՐԱՅԻՆ ԹՂԹԱԿՅՈՒԹԵՅՑ




Ամէն իրաւունք վերապահեալ են

Միակ Կեդրոնատեղի

« ՀՈՐԻԶՈՆ » ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Մ Ա Ր Ս Է Յ Լ



Տպագրութիւն «ՀՈՐԻԶՈՆ» Գրատան

Մարտի 11 1930



LEVON DJERAZIAN
LIBRAIRIE «HORIZON»
Rue des Dominicaines,
MARSEILLE

655596

ՍԵՓՂԿԱՆ ՀՐԱՏԱՐԱՌՈՒԹԻՒՆՔ

« ՀՈՐԻՉՈՆ », ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱՏԱՆ

ԽՈՂԱՆՈՅԻՆ ԳԻՐԲԸ որ կը սորվեցնէ համա-
գամ կերակուրներ պատրաստել : պիտանի է
ամէն ընտանիքի համար, Գին 5 ֆրանք

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍԻՐԱՅԻՆ ԵՐԳԵՐ, որ
կը պարունակէ սիրային 48 երգե, հաւաքէ
երաժշտապետ Լ. Ճէրահեան, Գին 5 ֆրանք

ՄՕՐԸ ԱՆԷՇԲԸ, վիպակ թրքահայ զաւառա-
կան յեղ. կեանքէ, Ս. Արմէն, Գին 2.50 ֆրք.

ՄԱՀԱՅՈՒ ՀԱՄԲՈՅՐԸ, սիրային գեղեցիկ և
յուզիչ վիպակ Պօլսահայ կեանքէ, հեղինակ
Սիմօն Արմէն, Գի 2 ֆրանք :

ԴԻԱԿՆԵՐՈՒՆ ՄԷՉԷՆ, սարսուղգեցիկ էջ մը
ականատեսի պատերազմի յուշերէն, հեղի-
նակ Լ. Ճէրահեան, Գին 2 ֆրանք :

ԱՆՉՆՅԻԼԻՐ ՅԵՂԱՓՈԽԱԿՆԸ, պատմական
վիպակ 1891—1895 ազգային յեղափոխական
կեանքէ, հեղ. Ս. Արմէն, Գին 5 ֆրանք

ՕՐԻՈՐԴԸ, սիրային խիստ յուզիչ վիպակ
Ֆրանսահայ կեանքէ, հեղինակ ԼԵՒՈՆ ՃԷ-
ՐԱՀԵԱՆ, Գին 4 ֆրանք :

Դիմեցէք ուղղակի գրատանս հասցէին՝
« ՀՈՐԻՉՈՆ », 27 Րիւ տէ Տօմինիքէն ՄԱՐՍԷՅԼ

Ե Ր Կ Ո Ի Խ Օ Ս Ք

— 0—00—0—

Խիստ յաճախ, երիտասարդներ մեզ դիմելով
կը խնդրեն որ սիրահարական նամակներ
գրեմ իրենց. իսկ շատեր ալ, կը թելադրեն
նամականի մը շարահարելով հրատարակու-
թեան տալ, ի պէտս սիրահար սրտերու :

Ներկայ գրքոյկովս փափաքած եմ պակաս
մը լրացնել և օգտակար ուղեցոյց մը տալ
մեր երիտասարդներուն :

Կատարեալ գործ մը չէ՛ ըրածնիս, և տնտե-
սական անձուկ պայմաններ հարկադրած են
մեզ, առայժմ այսքանով բաւականանալ, ա-
ւելի ընդարձակի մը հրատարակումը յառա-
ջիկային վերապահելով :

Պարտք կ'զգամ հոս յայտնելու թէ ներկայ
գրքոյկիս պարունակութիւնը մեր վտիտ գըր-
չին արդիւնքն է իր ամբողջութեամբ :

Մարտիլ, 28 Սեպ. 1929 Ս. ՍՄԲՈՒԼ

Ք Ն Ի Մ Ը Ա Ն Հ Ր Ա Ժ Ե Շ Տ

Տ Ե Ղ Ե Կ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ինչպէս ասէն թղթակցութիւն՝ նմանապէս սիրային թղթակցութիւնը կը պահանջէ գրողէն՝ ունենալ պատշաճ լեզու, յստակ սճ և քաղաքավարութիւն: Մանաւանդ երիտասարդներ պարտաւոր են նկատողութեան ատենել որ իրենց խօսակիցը փափկասուն օրիորդ մ'է, և իրենց անհաճոյ կամ դռեհիկ մէկ խօսքը կրնայ անոր բիւրեղեայ սիրտը վիրաւորել:

Ուստի, որքան ալ սիրով վառուած ըլլաք պէտք է որ ձեր ճշմարիտ ու մաքուր սիրոյն արտայայտութիւնը եղող այդ նամակներուն մէջ ցոլացնէք ազնիւ հոգիի մը հետ նաև ան յողորդ կամքի մը տէր ըլլալնիդ:

Այս ուղղութեամբ մեր ցոյց տուած օրինակները կրնան իբր ուղեցոյց ծառայել երկսեռ երիտասարդութեան:



ՔԱՆԻ ՄԸ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Պարունէն առ Օրիորդն ուղղեալ
Եւ փոխադարձաբար

— 000000000000000 —

ՆԱՄԱԿ ԱՌԱՋԻՆ

Սիրելի Օրիորդ նունուֆար

Երէկ, երբ առաջին անգամ ըլլալով ձեզ տեսայ, չեմ գիտեր ինչո՛ւ, սիրտս ալէկոծուեցաւ : Հո՛ն, այն ընտանեկան շրջանակին մէջ, ուր կը գտնուէինք երկուքս ալ, ձեր խելացի ու անուշ խօսքերն ու արտայայտութիւնները, ինչպէս և խիստ քաղաքավար ու վայելուչ կեցուածքը այնքան լաւ տպաւորութիւն գործեցին վրաս, որ անկէ ի վեր, մտածումս սկսեալ եմ ձեր վրայ :

Մի՛ մեղադրէք զիս. երբ ըսեմ թէ՛ բոլոր գիշերը քուն չի մտաւ աչքս : Զգացումներով ու սիրովդ վառուած սիրտս կը տրոփէ ձեզ համար : Այնքա՛ն հաճելի ձեր մտերմութիւնը զիս թոված է և զայն իզու՛ր կը փնտռեմ ձեզմէ բաժնուելէս ի վեր :

Ինձի համար մեծ բաղդաւորութիւն մը պիտի ըլլար, եթէ կարենայի զձեզ ունենալ ինձ սրտակից և բաղդակից :

Հաւատացէ՛ք սիրելի Նունուֆարս, որ երէկուրնէ ի վեր կեանքիս մէջ զգալի փոփոխութիւն մը մտած է, կարծես ինքզինքս ամփոփելու և նոր կեանքի մը պատրաստուելու ձգտում մը ունիմ : Դէպի լաւ սոյն փոփոխութիւնս ձեզ կը պարտիմ :

Կը կրկնեմ, անուշիկ Նունուֆարս, թէ սիրած եմ ձեզ, և այսու կը համարձակիմ զայս յայտնել ձեզ :

Կը փափաքիմ գիտնալ թէ դուք ալ փոխադարձաբար կը կրէ՞ք նոյն սէրը ինծի հանդէպ :

Սրտիս թարգման սոյն քանի մը հապճեպ տողերուս սրտաքաց պատասխանին ըստ պատելով կը խնդրեմ ընդունիլ անկեղծ սիրոյո հաւաստիքը :

Ի բոլոր սրտէ զձեզ սիրող
Վարդ Բաբկէնեան

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն

Սիրելի՛ վարդս,

Սրտի անհուն բերկրութեամբ ստացայ նամակդ : Ներէ՛ որ եղակի խօսիմ քեզի հետ և դո՛ւն ալ նոյնը ըրէ. այս ձևը աւելի անկեղծութեան նշան մը կը պարունակէ իր մէջ :

Ուրախ եմ սիրոյ անկեղծ ու անվերապահ

յայտնութեանդ համար :

Երէկ տատամսոտ էի, բայց այսօր կրնամ
անվարան քեզ ըսել՝ բոլոր զաղափարներս :

Երկարօրէն խորհեցայ նամակիդ պարու-
նակութեան վրայ : Արդեօք ո՛րքան անկեղծ
են սիրոյ խօսքերդ : Կը ներուի ինձ հարցնել
թէ պարզապէս ժամանցի՞ համար է ցոյց տը-
ւած այդ սէրդ, թէ ոչ իսկապէս անկեղծ սըր
աի և Լըչանիկ բոյնի Նը կազմութեան տեն-
ջին արտայայտութիւնն է :

Այս պարագան ճշտել անհրաժեշտ է ինձ հա-
մար, վասն զի, արդի երիտասարդութիւնը կը
միտի աւելի առաջին զաղափարին ծառայել
քան երկրորդին :

Բաց աստի, աննենք թէ ի՞նչքան իրարու
կը ճօտենանք բնաւորութեան տեսակէտով : Եւ
թէ դուն կը լրացնե՞ս երազներս, կամ թէ իմ
փնտոած իտէալ երիտասա՞րդն ես դուն :

Գլուխ գլխի տեսակցութիւնով մը այս բո-
լորը կարելի է հալ թել և հասկնալ :

Ամէն պարագայի տակ զգուշաւոր ըլլանք :

Սիրոյ այս նամակդ մասունքի մը պէս
կուրծքիս վրայ պիտի կրեմ միշտ :

Սրտագին բարեներով

Նամակիդ սպասող

Նունուֆար

ԵՐԿՐՈՐԴ ԼՍՄԱԿ

Քաղցրիկ Նունուֆարս

Հաճոյքով ստացայ սիրալից պատասխանդ :
Գրիչս անգոր է դգացած հրճուանքիս թարգման
ըլլալու : Կը հաւատա՞նք, երբ ըսեմ թէ ծայր
մտահոգիէ նամակիդ ուշացումին պատճառաւ :

Գրածներէդ հաճոյքով հասկցայ որ կար-
ծածէս շա՛տ աւելի խելացի ու ծանրախոհ
օրիորդ մըն ես, ճի՛շտ երազած ու փնտռածս :

Հիմայ աւելի բունն է սէրս և ոիրտս սի-
րովդ հրավառ : Հաճիստ քուն չունիմ բնաւ,
սրտիս մէջ սէրդ բոյն դնելէն ի վեր : Ախորժս
դոցուած է ու տեսակ մը մեղամաղձոտ սկսած
եմ դառնալ : Քեդ անգամ մը տեսնելու և
կտուց կտուցի տեսակցելու անզուսպ փա-
փա՞քս է արդեօք որ այս անսովոր վիճակին
մատնած է զիս, չե՛մ գիտեր :

Ամէն պարագայի տակ, սիրելի և անուշիկ
Նունուֆարս, ճար մը գտիր ու տեղ մը որոշէ,
երես առ երես խօսակցելու ու մեր սէրը իրար
անվարան յայտնելու համար :

Քաղցր է ինձ յուսալ որ չպիտի ուշանաս
բաղձանքիս գոհացում տուող կարգադրութիւն
մը ընել . Սպասելով սիրալիք գրոյդ, կը համ-
բուրեմ մեղրածոր շրթներդ : Քոյդ,

Վարդ Բաբկէնեան

Պատասխան

Սիրելիդ իմ Վարդ,

Սրտի տրոփիւնով ստացայ համակդ
որուն ակնդէտ կը սպասէի օրերէ իվեր :

Ե՛ս ալ, արդարև, քեզ տեսնելու մարմաջէն
բռնուած էի և օրերէ իվեր այդ կարելիութեան
վրայ միտքս կը յողնեցնէի : Ի՛նչ բարեբախ-
տութիւն որ երկուքս ալ միենայն տեսնով ու
մտածումով համակուեր ենք :

Ո՛հ, սիրելի Վարդս կարօտովդ կ'այրիմ, իբ-
րև թէ տարի մըն է չեմ տեսեր քեզ :

Մի՛ գարմանար այսքան անհամբեր ըլլա-
լուս սէրդգիս կայրէ և միայն քու տեսութիւնդ
է որ կրնայ սրտիս նորարծարծ հրդեհը մարել :

Լուսահողի Դուրեանի հետ իրաւունք չու-
նի՛մ ըսելու :

Ո՞հ, կը գողգոջեմ, տժգոյն եմ տժգոյ՛ն,

Փըրփըրչի ներսս, գժսխքի մ' հանդոյն . . .

Ուրեմն, անուշիկ հոգիս, վաղը, երեկոյեան
ժամը վեցին քեզ կը սպասեմ պատուհանիս
առջև, միասին պտոյտ մը ընելու համար :

Զափաղանց միամիտ է հայրս, մինչ մայրս
ճշմարիտ կնոջ մը պէս արթուն կը հսկէ վրաս
ու միշտ իր յորդորները չի գլանար նոյնիսկ
ընկերուհիներուս :

Երբեմն անուղղակի կ'ակնարկեմ մեր ա՛յս օրուան հաւաքոյթին, և բան մը յայտնի չընելու համար նախ ուրիշներու, վրայ խօսելէ յետոյ միայն քու վրայ ևս կ'անդրադառնամ տեսնելու համար թէ ի՛նչ գաղափար ունի քու մասին: Կրնամ ըսել որ համակրած է քեզ, բայց որոշ տեղեկութիւն մը չունի ծնողացոյց մասին: Իմ ջանքերս ապարդիւն չանցան այդ ուղղութեամբ, և ուրախ եմ որ կրցայ բաւական մը ծանօթացնել քեզ, թէև մայրս ծիծաղկոտ դէմքով մը ըսաւ թէ՛ հասունցած աղջիկները շա՛տ լաւ կ'ուսումնասիրեն իրենց աչքը խածած երիտասարդները . . . :

Բաւական յաջողութիւն մը չէ՞ այս դիտակից արտայայտութիւնը՝ մեզ համար:

Գրութիւնս այս անգամ երկար եղաւ, ու զայն վերջացնելէ առաջ կը կրկնեմ իրկուան ժամը ճի՛շդ վեցին քեզ սպասելուս պարագան:

Սիրտդ հանգարտ բռնէ, չըլլայ որ անհարկի մտածումներով յուզուիս ու հիւանդանաս: Քաջ դիտեմ որ այս իրկուան գլուխ գլխի մեր խօսակցութիւնը պիտի ամրապնդէ մեզ սիրոյ և համբերութեան մէջ:

Ձերմագին համբոյրներով, սիրուհիդ՝
Նունուֆար

ԵՐՐՈՐԴ ՆԱՄԱԿ

Քաղաքացիական հրեշտակա նունուֆար

Երէկուան մեր պտոյտն ու սիրազեղ խօսակցութիւնը զիս երջանկացուց . Գերագոյն վայելքը զոր մարդ կրնայ ունենալ, այդ ալ, իր սիրային անդրանիկ քայլերուն մէջ, գեղանի ու անխառն սիրով մը զինք պաշտող կոյսի մը սրտին տիրել կարենալն է :

Ահա այդ վայելքը պարզեցիր ինձի երէկ : Մանուկի մը պէս ուրախութիւնս չեմ կրնար ծածկել քեզմէ, ո՛հ անուշիկ պէպէքս :

Որքա՛ն բունն է սէրս, զիտե՞ս, և եթէ օրերով քու ներկայութիւնդ վայելեմ, չպիտի կրնամ կշտանալ քեզմէ :

Ինչքա՛ն հրապուրեցիր ու թովեցիր զիս շնորհալի խօսքերովդ : Վառեցիր հոգիս ու երևակայութիւնս : Իրա՞ն է որ իմ սիրունիս ես դուն այսօյ, իմ հոգի՛ս, իմ հրեշտակա :

Կարելի՞ է չի յուզուիլ, չապրիլ սիրահարական գերբնական այս կեանքը :

Սէրը Աստուածային է կ'ըսեն : Յիրաւի որ կ'զգամ այդ գերբնային վիճակը : Ու զիտցի՛ր, նունուֆարս թէ քեզ ոիրելէս իվեր ո՛չ հանգիստ ունիմ, և ո՛չ ալ խելք :

Ո՛հ, չեմ կարող պատմել ինչ որ սրտիս
մէջ կ'անցնի կը դառնայ : Աշխարհ ինձ կը
ծիծաղի կարծես : Սրտիս մէջ անհատնում և
քեզ համար ալ խնկելի փափաքներ ունիմ
սրտնցմով կուրծքս կուռի :

Երան' այն օրուան, երբ հիմէնեան կապով
իրարու պիտի կապուինք : Ա՛խ, քնքուշ հո
վիս, հրդեհ մը կայ ներսս որ ամբողջ էու-
թիոնս պիտի շափլիզէ :

Վերջապէս. քայցրիկ նաւու թարս, երէ կուրնէ
իվեր խիտտ անբնական վիճակ մը ունիմ, և
մայրս կուայսած է թէ բան մը կ'անցնի կը
դառնայ իմ մէջս, բայց չի կրնար գաղտնիքն
իմանալ : Հէք կին, չգիտեր թէ սիրոյ հրդեհ
ունիմ կուրծքիս տակ, որ կը տուչորէ դիս :

Սիրտս կը դողայ և անզօր կը գտնուիմ
զգացումնորուս վարապոյրը մօրս բանալու :

Գիրս վերջացնելէ առաջ թախանձանօք կը
խնդրեմ որ նամակիդ կցես նաև շնորհալի
պատկերդ, որպէսզի կարողանամ քու բացալ
կայութեանդ, հրակէզ շրթներուս անյազ
համբոյրներովն ողողել զայն :

Նամակիդ անհամբեր սպասող սիրահարդ՝

Վարդ Բաբկէնեան

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն

Անուշիկ և քաղցրիկ Վարդա,

Սիրատուչոր սրտիդ թարգման գրութիւնդ
ընդունեցի և քանիցս կարդացի զայն :

Խիսա յուզուած եմ ու չպիտի կարենամ
գրութեա եք արտայայտել զգացումներս : Գլը-
խու ցաւ մը պիտի զգեսնամ է . չիմ կարող աչք
բանալ : Ա՛ի քաղցրաբոյր Վարդա, ըսէ՛ ին-
չո՞ւ այսքան խենթի մը նման կը սիրեմ
քեզ : Այս ի՛նչ դժուար բան է քեզմէ հե-
ռու մնալը : Մտացիլը եմ, ամէն վայրկեան
միայն քու վրայ ձտածել կ'ուզեմ, ու երբէք
աչքիս առջևէն չի հեռանար անուշիկ դէմքդ :

Վա՛րդա, սիրելի՛ո, ե՞րբ պիտի ազատես
զիս այս վիճակէն : Ինչո՞ւ չես խորհիր մեր
շուտփոյթ միացման ապահովութեան վրայ :
Մինչև ե՞րբ այսպէս պիտի տառապինք ու
հալուճաշ ըլլանք : Տե՛ս, հոգեհատորդ իմ,
որքան գունատեցայ րա քանի մը օրուան
մէջ : Սիրտս կը հատնի, և երբեմնի խաղաղ
կեանքիս երանի կ'սւտամ այսօր :

Եթէ կարելի է, վաղը երեկոյ զիս տես-
նելու եկուր որոշեալ տեղը, ուր քեզ պի-
տի սպասեմ ժամը վեցուկէսին : Կարօաա :
Կէզ սրտիո զովացում կը խնդրեմ, և վատտն

եմ, որ այլևս վճռական քայլեր պիտի առնես
ու վերջ մը դնես մտահոգութիւններուս :

Ի բոլոր սրտէ քեզ սիրող

Նունուֆար



ԶՈՐՐՈՐԴ ԵՒ ՎԵՐՋԻՆ ՆԱՄՍԿ

Սիրելի և քաղցրիկ հոգիս,

Վերջապէս, այսօր յա ղթութեան օր մըն է
մեզի համար : Մեր բողոքներուն իրակա-
նացումը ապահովուած է այլևս : Քանի մը
օր առաջ ամէն բան պարզեցի մօրս, որ ուշիւ
ունկնդրելէ վերջ, ժպտաշուրթն ըսաւ, թէ
խիստ յարմար ընտրութիւն մը ըրած եմ, և
ճակատս համբուրելով խոստացաւ անմիջապէս
դիմել ծնողքիդ : Յաջորդ օրուայ ձեր տան
մօրս տուած այցելութեան նպաստաւոր ար-
դիւնքը յայտնապէս կ'ապացուցանէ թէ իրա-
րու արժանի էինք :

Որոշուած ըլլալով որ վաղը երեկոյ իսկ
ձեր տունը կատարուի նշանախօսութեան հան-
դէսը, աւելորդ է և պէտք չկայ այլևս թըղ-
թակցութեանց : Յուսալով որ սիրտդ հանգիտ
է ու ինձի հետ կըսպասես երջանիկ և բերկ-
րատու օրուան :

Սրտադին համբոյրներով
ընդմիշտ քոյդ
Վարդ Բաբկէնեան

—00000000000000—

ԶԱՆԱԶԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

— 000 — 000 — 000 —

ՄԻՐՈՒ յայտարարութիւն

Սիրելի՛ Օրիորդ,

Երկար ատենէ ի վեր, անոտահման և անբիծ
ոէր մը կը տածեմ ձեզ հանդէպ, որովհետև
ձեր շնորհալի ձիրքերն ու ազնիւ քնաւորու-
թիւնը զիս չափազանց հրապուրած են :

Քանիցս վրիչը ձեռք առի գրաւորապէս
յայտնելու համար իմ ոէրը ձեզ, բայց ամէն
անգամուն ալ հրաժարեցայ այդ մտադրութե-

նէս, վախնալով որ ձեզ կրնամ վշտացնել և
այս կերպով կորոնցնեմ նաև ա՛յն համակրու-
թիւնը՝ զոր ամէն առթիւ ցոյց կուտաք միշտ
ինձ հանդէպ :

Այլ ոակայն, սիրելի Օրիորդս, չի կարենա-
լով այլևս դիմադրել սիրոյս, և երկար ժամա-
նակէ ի վեր բոնի խեղդուած զգացումներուս՝
կը համարձակիմ այսօր ձեզ գրել ու խոստո-
վանիլամենը, յուսալով որ չպիտի մերժուիմ
այլ պիտի վայելեմ ձեր հաւանութեան և փո-
խադարձ սիրոյ շնորհը, որով տշխարհի ամե-
նանըջանիկ և բաղդաւոր մարդը պիտի ընէք
զիս : Երբէ՛ք չպիտի զղջաք ձեր կեանքը ինձ
հետ կապելնուդ, որովհետև ձեզ երջանիկ
ապրեցնելու բոլոր միջոցները խորհած ու
կարգադրած եմ :

Սըտատանջ անձկութեամբ և յաւզուած
միտքով ձեր պատասխանին ուղասող սիրա-
հար և խոնարհ ծառան՝

Թուական

Ստորագրութիւն

ՆՊԱՍՏԱԻՈՐ

ՊԱՏԱՍԽԱՆ

Ադնիւ Պարոն

Հաճութեամբ կարդացի նամակնիդ և բնաւ
չզարմացայ անոր պարունակութեան վր

քանի որ ժամանակէ մը իվեր դիտակից էի
ձեր վրայ գործած ազդեցութեանս և նշմարած
ինձ հանդէպ ձեր համակրալից վերաբերմանց
նպատակը :

Սակայն, ազնիւ պարոն, կը վախնամ, որ
մի՛ գուցէ ձեր գրութեան մէջ յայտնած ձեր
սէրն ու համակրանքը. արտագոյ կարգի ոգե-
ւորութեան մը ազդեցութեան տակ յանկար-
ծակի զգացուած վաղանցուկ սէր մը ըլլայ՝
վասնդի, խիստ շատեր այսպիսի պատահա-
կանութիւններու զոհ երթալով շատ դժբաղդ
եղած են :

Իսկ, եթէ դուք անկեղծ օրէն համակրած
ու սիրած էք զիս և ուխտած էք լուրջ ու տե-
ւական սէր մը ունենալ, այն ատեն- այդ հա,
մակրութիւնն ու սէրը պատիւ մը համարե-
լով ինձ, չպիտի մերժեմ ձեր առաջարկը և
երբէ՛ք անտարբեր չպիտի գտնուիմ ձեր
յայտնած սիրոյն :

Սպասելով ձեր որոշ պատասխանին, կը
խնդրեմ ընդունիլ խորին յարգանացո հա-
ւաստիքը :

Ձեր ազախինը

Թուակոն

Ստորագրութիւն

Պատասխան՝ ուր Օրհորդը կը յայտնէ թէ
ծնողքին կարծիքին ու հաւանութեան
պիտի դիմէ

Յարգելի՛ Պարոն,

Ձեր նամակով մեծ պատիւ մը ըրած էք ինձ :
Այս պատիւը աւելի պերճախօս պիտի ըլլար
եթէ ձեր զգացունները ուղղակի ծնողքիս
յայտնէիք :

Եւ որովհետեւ ես պարկեշտ և համեստ ըն-
տանիքի մը զաւակն եմ, ձեր առաջարկու-
թիւնը պիտի ներկայացնեմ ծնողքիս :

Եւ քանի որ իմ բարեպաշտ ծնողքս ինձ-
մէ աւելի լաւ գիտեն կեանքի պայմանները,
և միշտ բաղձացող իմ երջանկութեանս, այժ-
մէն կրնամ վստահեցնել ձեզ, թէ ի՛նչ որ ալ
պատահի, պարտաւոր եմ պաշտելի ծնողքիս
հրամաններուն հնազանդելու :

Անշուշտ, իբրև խորհող և պատուախնդիր
երիտասարդ, չպիտի մեղադրէք զիս, այս որո-
շումիս համար :

Սոյն պարագան ձեզ հաղորդելով կը մնամ
ձեր խոնարհ աղախինը

Թուական

Ստորագրութիւն

ՄԵՐԺՈՂԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆ

Ազնիւ Պարոն,

Ձեր սիրատենջ նամակն ստացած ըլլալով
կը փութամ հաղորդել ձեզ, թէ զուտ անձնա-
կան պատճառներով ստիպուած եմ մերժել
ձեր ամուսնութեան պատուաբեր առաջարկը :

Ձեր խիստ պատուաւոր և խոհեմ ընտրիւնը
վաղուց ինձ ծանօթ ըլլալուն, յոյս ունիմ, որ
պիտի զգուշանաք ձեր խնդրանքը կրկնելով
զիս անհանգիստ ընելէ, քանի որ ցաւալիօրէն
և բացարձակապէս անկարելի է ինձ զոհա-
ցում տալ ձեր փափաքին :

Ընդունեցէք, ազնիւ պարոն, անկեղծ յար-
գանացս հաւաստին :

Ձեր խոնարհ աղախինը
Թուական Ստորագրութիւն

— 000 — 000 —

Ուրիշ օրինակ մը

Յարգելի Պարոն,

Ընդունած եմ ձեր նամակը, որուն պարունա-
կութիւնը զիս խորապէս յուզած է: Եւ սակայն,
շնորհակապութիւն յայտնելով հանգերձ ինձ
հանդէպ ձեր ցոյց տուած համակրանքին,

կը ցաւիմ ըսել, որ հակառակ կամքիս, չպիտի
կրնամ գոհացում տալ ձեր փափաքին՝ կարգ
մը գուտ ներքին կարևոր պատճառներով :

Ընդունեցէ՛ք, յարգելի՞ս պարոն, խորին և
անկեղծ յարգանքներս :

Թուական

Ստորագրութիւն

— 0 — 0 — 0 — 0 — 0 —

ՊԱՆԴԽ ՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԳՏՆՈՒՈՂ ՉԱԻԿԷ ՄԸ
ԻՐ ԾՆՈՂԻԹԻՆ ՈՒՂՂԵԱԿ ՆԱՄԱԿ

Ամուսնութեան արտօնութեան խնդրանքով

Սիրիլի ծնողքս.

Վեց տարիներէ ի վեր Պօլսէն հեռացած եմ,
զրկուած ու տաժանագին աշխատութեամբ
կեանքս կը փտեցնեմ այս օտար երկրին մէջ :

Երեկոյին, երբ գործէ կը վերագառնամ սեն-
եակս, տխրութիւն մը կը շոքի վրաս, տեղնե-
լով որ, զրկուած եմ ընտանեկան ամէն տե-
սակ խնամքէ ու գուրգուրանքէ : Միևնոյն
ատեն, առանձնութենէ ևս ձանձրոյթ կ'զգամ :

Բոլոր այս պարագաները նկատողութեան
աւնելով որոշեցի ամուսնանալ Օրիորդ Ք. Ի
հետ, որուն ծանօթացած եմ երկարատեանէ
ի վեր, և իր բնաւորութիւնն ու համեստ - կեն

ցաղը խիստ յարմար գտած եմ ինձի :

Ներփակեալ պիտի գտնէք Օրիորդին լուսանկարը . ինձմէ ութ տարի փոքր է և լազերձակի հասրաւ ունի : Իր հայրենակիցներէն ալ քաղած եմ նպաստաւոր տեղեկութիւններ :

Բաց աստի, Օրիորդը պատրաստ կարևոր գումար մըն ալ իր հետ պիտի բերէ : Այդ դրամը միացնելով վեց տարիէ ի վեր Գրէտի Լիօնէ պանքային մէջ խնայած գումարներուս, պիտի կարենանք ապահովել մեր ապագայի բոլոր պէտքերը :

Այո կարևոր պարագան անշուշտ ուրախութիւն պիտի պատճառէ ձեզ :

Որեմն՝ սիրելի ծնօղքս, սոյն բոլոր տեղեկութիւնները ձեր լուրջ ուշադրութեան յանձնելով, թախասձագին կը խնդրեմ ձեզմէ, որ արտօնէք զիս յիշեալ Օրիորդին հետ Սուրբ Պսակով կապուելու :

Սպասելով ձեր պատասխանին. կը մատուցանեմ որդիական անկեղծ յարգանացս հաւատարիքը :

Ձեր գուրգուրանքին ապաւինող զաւակնիդ
Թուական Ստորագրութիւն

ՈՐԲԷ ՄԸ ՈՐԲՈՒՆԻՒ ՄԸ ՈՒՂՂԵԱԼ

ամուսնութեան առաջարկ

Ազնիւ Օրիորդ Չարուհի,

Երկուքս ալ որք ենք, միևնոյն բաղդէն հա-
լածուած ու հարուածուած : Ո՛չ հայր ունինք
ո՛չ մայր : Երկար ատեն միասին ապրեցանք
միևնոյն որբանոցին մէջ, որով, մօտէն տեղ-
եակ ենք իրարու բնութեան :

Ե՛ս, հաւնած ըլլալով քու համեստութեանդ
և վստահելով նաև քու պարկեշտ կենցաղիդ,
կ'ուզամ առաջարկել քեզ, միացնել մեր սրբ-
տերը, կազմել ընտանեկան տաքուկ բոյն մը,
և գլուխ գլխի, ձեռք ձեռքի տալով աշխատիլ
վերընձիւղելու մեր պապենական օճախը :

Ահա՛, սիրելի Չարուհիս, իմ համեստ նպա-
տակս և կեանքի ուղիդ ծրագիրս :

Կը յուսամ, ազնիւ Չարուհիս, որ այս ա-
ռաջարկիս հաճութեամբ պիտի հաւանիս և
օժանդակես փափաքիս իրականացման :

Սպասելով անվերապահ պատասխանիդ,
կը խնդրեմ ընդունիլ անկեղծ սիրոյ և յարգա-
նացս հաւաստիքը :

Քու բաղդակիցդ
Հայկ Ազատունի

Պատասխան

Սիրելի պարոն,

Շնորհակալութեամբ ստացայ յուզիչ գրութիւնդ, որ համակ շնորհ և իմաստութիւն կը ցուցանէր :

Խիստ զովելի են զաղափարներդ, իմ մասին ունեցած սէրդ ու հաւատքդ զիս այժմէն կ'երջանկացնէ: Քեզ համամիտ չը գտնուելու պատճառ մը չունիմ, և վստահ եմ, որ խոհական ու համերաշխ կենակցութեամբ կըրնանք օրինակելի ըլլալ մեր նմաններուն :

Երանի՛ թէ ամէն խելահաս որք քեզ պէս մտածէր, այն պարագային բազմաթիւ որբուհիներ միւլթարութիւն սխալի գտնէին ու երկուստեք պիտի փրկուէին անորոշ, ու թերևաւ վտանգաւոր կեանքերէ :

Ուրեմն, հաճութեամբ 'կընդունիմ ամուսնութեան առաջարկդ, ու սպասելով առ այս հարկ եղած անհրաժեշտ պայմաններու լրացման, կը խնդրեմ ընդունիլ անկեղծ համակրանացս հաւաստին :

Յարգանքներով

Քոյդ

Զարուհի Ճիւմպիւշեան

ԶԱԻԱԿԷ ՄԸ ԻՐ ԾՆՈՂՔԻՆ ՈՒՂՂԵԱԼ ԿԱՄԱԿ
ամուսնութեան արտօնութիւն խնդրելու համար

Սիրելի ծնողքս, և կամ. հայր իմ

Անակնկալ մը չէ՛ որ ձեզ պիտի գրեմ՝ քահանի որ դուք ալ ատենէ մը ի վեր ինձ կը խօսէիք անհրաժեշտութեան մը մասին, որուն վրայ այսօր լրջօրէն կ'անդրադառնամ :

Չափահաս եմ, կը տաղտկանամ յետնութենէ, և պէտքը կը զգամ կենակցի մը, ընտանեկան երջանիկ բոյնի մը ,

Արդէն, վաղուց ինձի մտերմացած և ձեզ ալ խիստ մօտէն ծանօթ Օրիորդ Վ. ն ալ ինձ յարմար գտնելով, այսօր կ'ուզամ խնդրել ձեր հայրութենէն, որ արտօնէք զիս իմ փափաքիս իրագործման :

Օրիորդ Վ. իր հետ կը բերէ հօրմէն ժառանգած բաւական կլոր գումարը, իբր դրամօժիտ, որուն միացնելով իմ խնայողութեանս արդիւնքը, պիտի կարենամ ընտանիքս ապրեցնելու համար արդիւնաւոր գործի մը ձեռնարկել :

Ուրեմն, սիրելի հայր, անհրաժեշտօրէն պիտի խնդրեմ որ խորապէս նկատի առնելով խնդրանքս, բարեհաճիք ձեր հայրական ու ծնողական հրահանգներն ու հաւանութիւնը փութով հաղորդէք ինձ :

**ՏԱՐԷՑ ՄՍՐԴՈՒ ՄԸ ԿՈՂՄԷ
ԴԵՌԱՏԻ ՕՐԻՈՐԴԻ ՄԸ ՈՒՂՂՈՒԱԾ**

Սիրոյ յայտարարութիւնը

Սիրելի՛ Օրիորդ,

Հաւագոյն զգացումներով տողորուած երկար ատենէ իվեր կը տառապիմ ձեզ համար : Հակառակ որ քսան և հինգ տարիներու առաւելութիւն մը ունիմ ձեր վրայ, սիրտս ճշմարիտ սիրով մը կը բաբախէ : Խիստ երիտաւարդ կըզգամ ինքզինքս և կը համարձակիմ ձեզ յայտնել գորովալից սէրս, քաջ գիտնալով հանդերձ, թէ այս յայտնութիւնս յաջողութեան շատ քիչ յոյս ունի :

Տարիքէս մի՛ խրտչիք, այլ նկատի ունեցէք իրիտասարդի կորովս և եռանդս : Բաց աստի, քիչ շատ կարևոր հարստութեան մընալ տէր ըլլալով, ո՛չ միայն հանգիստ պիտի կրնամ ապրեցնել ձեզ, այլ և յետ մահու պիտի թողում ձեզ այժմէն ապահովուած կարևոր գումար մը, իբրև իմ կողակիցս :

Արդ, սիրելի Օրիորդ, այս բոլոր առաւելութիւնները ձեր խորին ուշադրութեան յանձնելով յոյս ունիմ, որ պիտի բարեհաճիք կարելի եղածին չափ շուտ յայտնել ձեր պատասխանը՝ որուն կ'սպասեմ անձկութեամբ :

Խորին յարգանքներով, ձերդ

Թուական

Ստորագրութիւն

Հատատական Պատասխան

Յարգելի Տիար . .

Հաճութեամբ կարդացի ձեր գրութիւնը և ընդ երկար խորհեցայ անոր պարունակութեան վրայ : Ինծի այնպէս կը թուի, թէ աշխարհի մէջ չկայ աւելի քաղցր բան՝ քան գիտակից և ճշմարիտ սիրով շաղախուած ամուսնութիւնը :

Ո՛չ ձեր տարիքը և ո՛չ ալ ձեր հարստութիւնը այնքան նկատելի են ինձ համար, որքան զիս երջանիկ պահելու ձեր խոստումը :

Ուրեմն, երբ ներկայիւս կ'ընդունիմ ամուսնութեան ձեր առաջարկը, դեռատի տարիքիս բերմամբ, փառքի և ճոխ կեանքի հետամուտ եզոզ աղջիկ մը չի նկատուիմ ձեր կողմէ :

Ուստի, հաւատալով որ մեր կեանքի միութիւնը երջանիկ բոյնի մը կորիզը պիտի ըլլայ, կ'սպասեմ առ այս անհրաժեշտ ձևակերպութեանց լրացումին :

Մատուցանելով խորին յարգանացս հաւատիքը, կը մնամ անկեղծ զգացումներով,

Ձերդ հաւատարիմ

Ստորագրութիւն

Թիւ

Մեր ժողովան պատասխան

Ազնիւ Պարոն . . .

Սիրոյ և ամուսնութեան առաջարկութիւն պարունակող ձեր նամակը ընդունած եմ իրատենին : Ձեր բոլոր հաւաստումներուն և մանաւանդ նիւթապէս ձեր փայլուն գիրքին հիացող մը ըլլալով, ինչպէս և այդ առաւելութեանց շնորհիւ իմ ալ երջանկութիւնս ապահովութիւնը գիտնալով հանդերձ, կը ցաւ իմ ըսել թէ, պիտի չկրնամ ընդունիլ ձեր առաջարկութիւնը, որովհետև մեր տարիքները անհամեմատ կերպով իրարու անյարմար են :

Ինչքան լաւ պիտի ըլլար եթէ տասը տարու աւելի փոքր եղած ըլլայիք :

Խնդրելով որ ներողամիտ զտնուիք յակամայս ձեր առաջարկը մերժելուս, կը մատուցանեմ խորին յարգանացս հաւաստիքը :

Ձերդ

Թիւ

Ստորագրութիւն

ԱՅՐԻ ԿՆՈՋ ՄԸ

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԽՆԴՐԱՆՔ

Համեստափայլ Տիկին : . .

Աիրելի և յարգելի տիկին

Արդեօք կը ներուի՞ ինձ յայտնել այն խորին հիացումն ու յարգանքը՝ զոր կը տածեմ ձեզ հանդէս, ձեր այնքան յարգելի ամուսնոյն մահէն ի վեր, որուն վիշտը նոյնքան համակած է զիս՝ որքան ձեզ :

Այս խոր հիացումն ու յարգանքը ա՛յնքան զօրացած է սրտիս մէջ, որ ոտիպուած եմ այսօր բացէ իբաց բանալ սիրտս ձեզ և յայտնել զզացումներս :

Կը սիրեմ, հմայուած եմ ձեր շնորհալի գեղեցկութենէն և մաքուր կենցաղէն : Ուստի, ներկայիւ կը խնդրեմ ձեր ձեռքը, առանց նկատի ունենալու ձեր այրիութիւնը, և վրստա՛հ եղէք, սիրելի տիկին, թէ երբէ՛ք պիտի չի զղջաք ձեր սիրտը ինձի նուիրելնուդ :

Սպասելով ձեր թանկագին պատասխանին կը մատուցանեմ անկեղծ սիրոյս և խորին համակրանացս հաւաստիքը :

Ձեր երջանկութեան ցանկացող

Թուական

Ստորագրութիւն

ԽՉՄԱՆ ԼՍՄԱԿ

ԾՆՈՂՔԷ ԾՆՈՂՔԻ ՈՒՂՂԵԱԼ

Սզնի՛ւ Պարոն,

Որքան որ մեր երկու ընտանիքներուն միջև մեր իրելի դաւակներուն ամուսնութիւնը որոշուած էր, և սակայն, կը ցաւինք ըսելու, թէ ստիպուած ենք հրաժարիլ այդ դադափարէն, հակառակ մեր կամքին :

Սոյն որոշման յանդերձ ստիպման մէջ ոնէ վիրաւորական բան չկայ երբէք՝ ձեզի և շատ լաւ ձիրքերով օժտուած ձեր յարգելի զաւկին հանդէպ : Ընդհակառակը, այս որոշումնիս արդիւնքն է բոլորովին ներքին կարգ մը պատճառներու ,

կը յուսանք թէ, այս պարագան նկատի առնելով ձեր պարոն զաւակը պիտի յարգէ փափկանկատութիւնը և պիտի դադրի այլևս մեզ այցելելէ :

Հաճեցէ՛ք ընդունիլ, ազնիւ պարոն, լաւագոյն զգացումներու և բարձր յարգանացս հաւաստիքը :

Ձերդ

Թուական

Ստարագրութիւն



ՀՕՐ ՄԸ ՈՒՂՂՈՒԱԾ ՆԱՄԱԿ

ԱՂԶԿԱՆ ՁԵՌՔԸ ԽՆԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Մեծայարդ Տիար - . .

Երկար ժամանակէ ի վեր ձեր նազելի դրստեր՝ Օրիորդ վեհանոյշի մօտէն ծանօթացած ու անոր համակրած ըլլալով, այսու կը համարձակիմ յայտնել բոլոր զգացումներս, ու ձեր ազնիւ Օր. աղջկան հանդէպ սնուցած մաքուր սէրս, և խնդրել անոր ձեռքը:

Ձեր մեծայարդութիւնը կրնայ վստահ ըլլալ, թէ խիստ երջանիկ և հանգիստ կեանք մը պիտի վայելէ իր հոգեհատորը, շնորհիւ իմ լաւ գործիս և դիրքիս, որոնց ծանօթ էք:

Յուսալով որ ձեր պատասխանը չպիտի յապաղեցնէք, կը փութամ յայտնել որդիական անկեղծ և ամենաբարձր յարգանացս հաւատարմութիւնը:

Ձեր խոնարհ գաւակը

Թուական

Ստորագրութիւն

ՇՆՈՐՀԱԻՈՐԱԿԱՆ ՔԱՐԴԵՐՈՒ ՎՐԱՅ

— 000 — 000 —

Նոր Տարւոյ Շնորհաւորութիւն

Ամենասիրելի Վարդուհիս,

Կը շնորհաւորեմ Նոր Տարին և կը մաղթեմ որ ա՛ն մեզ համար ըլլայ սիրոյ փթթումի և մեր սրտերուն յաւէտ միացման տարին:

Զքեզ պաշտող և սիրոյդ կրակէն այրուող
սիրահարդ

Թուական

Գեղամ Սարունի

Հոգեհատորս Աստղիկ,

Շնորհաւորելով Նոր Տարին, քեզ ընծայ կը դրկեմ սրտիս վարդաստանէն փրցուած ու սիրովս շաղախուած ծղկէփունջ մը:

Սիրոյ համբոյրներով

Յաւէտ քոյդ

Զարմայր Զընկրտագեան

— 0 — 0 — 0 —

Սրտիս հատոր Շուշանս,

Ահա հասաւ Նոր Տարին, և գեո՛ մեր սրտերուն միացման օ՛րը չհասաւ:

Կը շնորհաւորեմ Կաղանդը և կը մաղթեմ
մեր սիրահալ սրտերուն միացման իրականա-
ցումը:

Երջանկութեանդ ցանկացող սիրահարդ
Գէդէոն Յնժակեան

Պաշտելիդ իմ Զարուհի:

Խնդութեամբ կը շնորհաւորեմ Նոր Տա-
րին, և կը մաղթեմ բոլոր բաղձանքներուդ ի-
րականացումը:


Ընդունէ՛ համբոյրներս իբր նուէր:
Սիրականդ
Թուական Մանուէլ Տուրտուրեան

Քաղցրիկ հոգիո՛ Չարմանդուխտ,

Նոր Տարիի սեմին վրայ կանգնած կը սեղ-
մեմ ձեռքդ, մաղթելով մեր սիրատենջ սրտե-
րուն երջանիկ միութեան իրականացումը:

Սրտագին բարեներով, քուկինդ
Թուական Բազրատ Պահլաւունի

ՎԵՐՉԱՑԱԻ



Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն

ԳՐԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀՈՐԻԶՈՆ

27, Րիւ տէ տօմինիքէն, Օթէլ Սիւրիա

Մ Ա Ր Ս Է Յ Լ

Ուր միայն կրնաք դանել

Ամէն տեղակ վիպական, Գիտական, Պատմա-
կան, Դպրոցական, Երաժշտական, Բանաստեղծական,
Լեզուաբանական Գ Ի Ր Ք, Խօսակցութիւններ, Երա-
զան, Երգարաններ, ևայլն :

Նմանապէս, նամակի ընտիր թուղթ, պահա-
րան, գրպանի, դպրոցական, գծագրութեան, նօթայի
տետրակներ, թուղթեր, ինչպէս և ընտիր մեղան, գրիչ
մատիտ, ծայր, կոմ, կաւիճ, ծծուն թուղթ ևայլն

Նաև, ազգային նշանաւոր դէմքերու և ուրիշ
ամէն տեղակ գունաւոր Քարթ Բոստալներ:

Դիմեցէ՛ք, գոհ պիտի մնաք: